ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 10.03.2021թ.),

Հ. Ղազարյանի (լիազորագիր՝ տրված 10.03.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3202-2021 գրությամբ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության 01.03.2021թ. թիվ 3/27/11929-21 գրության հիման վրա 04.03.2021թ. թիվ 26/26-1/3202-2021 գրությամբ նախաձեռնել է «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետյալը.

«1. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1.1. ՀՀ ոստիկանությունը իր կարիքների համար կենցաղային և հիգիենիկ նյութերի ձեռքբերման նպատակով 05.02.2021 թվականին հրապարակել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ԿԵՆՑԱՂ/ՀԻԳ» գնանշման հարցումը (այսուհետ նաև՝ գնանշման հարցում).

1.2. 19.02.2021 թվականին «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից) ներկայացրել է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն' 1, 2, 3, 5, 6, 8, 9, 10, 11 չափաբաժինների վերաբերյալ (այսուհետ նաև՝ հայտ).

1.3. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անճշտություններ՝ հավելված 1.1 չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ անվանումը և ապրանքային նշանը չեն համապատասխանում տեխնիկական բնութագրով նշված պահանջներին:

10-րդ չափաբաժին TORCH GO LTD ապրանքային նշանը չի համապատասխանում հավելված 1.1 պահանջներին,

11-րդ չափաբաժին TORCH GO LTD ապրանքային նշանը չի համապատասխանում հավելված 1.1 պահանջներին:

Մեկ աշխատանքային օրով նիստը կասեցվել է և Մասնակցին տրվել է արձանագրված ենթադրյալ անճշտությունը ճշտելու ժամանակ:

1.4. Մասնակցի և Պատվիրատուի միջև իրականացվել են բանակացություններ ենթադրյալ անճշտությունները պարզաբանելու նպատակով, արդյունքում գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը առանց պարզաբանելու անբավարար է գնահատել մասնակցի հայտը 24.02.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ:

2. Գործի փաստական և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3.Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես՝ պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (….):

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը: Իսկ ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Մասնակցի ստանձնած պարտավորության խախտման արդյունքում պետք է առկա լինի նաև Պատվիրատուի կողմից գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցումը, որը իր հերթին պետք է իրականացվի համապատասխան ընթացակարգով: Մասնավորապես հրավերի պահանջների անհամապատասխանության արձանագրման արդյունքում Հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով պետք է կասեցվի, պետք է ծանուցվի արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ, նրան հնարավորություն տրվի կասեցման ժամանակահատվածում շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, որի դեպքում նոր միայն հայտը գնահատվի անբավարար և մերժվի: Պատվիրատուի գործողությունների ոչ իրավաչափ կատարումը կարող է հանգեցնել գնման գործընթացին մասնակցի մասնակցության դադարեցմանը, սակայն ոչ իր մեղքով, այս պարագայում պարտապանը պարտավորությունը չկատարելու համար ազատվում է պատասխանատվությունից մեղքի բացակայության հիմքով:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ՝ պետք է արձանագրել հետևյալը, որ մասնակցի կողմից գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ներկայացվել է հավելված 1.1 պատշաճ լրացված տարբերակով: Թեպետև գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 22.02.2021 թվականի արձանագրային որոշմամբ մեկ

աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը և մասնակցն առաջարկել շտկել արձանագրված ենթադրյալ անճշտությունը, սակայն ըստ էության չպահպանելով Կարգի 41-րդ կետի պահանջները: Անհամապատասխանության արձանագրմամբ գնահատող հանձնաժողովը պետք է հստակ սահմանի դրանք, որպեսզի մասնակիցը հնարավորություն ունենա շտկելու դրանք, հակառակ պարագայում հայտում առկա անհամապատասխանության շտկման ինստիտուտը չի ծառայի իր նպատակին: Սույն դեպքում գնանշման հարցման հանձնաժողովը Մասնակցին պահանջել է շտկելու արձանագրված ենթադրյալ անհամապատասխանությունը, որը իրականում առկա չէ: Մասնավորապես. որպես անհամապատասխանություն նշվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1 չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին մասնավորապես՝ անվանումը և ապրանքային նշանը չեն համապատասխանում տեխնիկական բնութագրով նշված պահանջներին: Գնանշման հարցման տեխնիկական բնութագրով, ապրանքի անվանմանը և նշանին վերաբերվող պահանջներ և մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը ամբողջապես նույն է հրավերում ներկայացված պահանջի հետ, որի պարագայում տարակուսելի է գնահատող հանձնաժողովի պահանջը: Ինչպես նաև գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն, որ 10-րդ չափաբաժին TORCH GO LTD ապրանքային նշանը չի համապատասխանում հավելված 1.1 պահանջներին, ինչպես նաև 11-րդ չափաբաժին TORCH GO LTD ապրանքային նշանը չի համապատասխանում հավելված 1.1 պահանջներին: Առնվազն անհասկանալի և ոչ ճիշտ նշված տեղեկությունները Մասնակցին գցել են շփոթմունքի մեջ, և ըստ էության մասնակիցը չկարողանալով հստակ հասկանալ իրեն ուղղված փորձել է այն ճշտել Պատվիրատուից, քանզի TORCH GO LTD ապրանքային նշան չէ, այլ այն արտադրողի անվանումն է և Մասնակցի կողմից TORCH GO LTD լրացվել է, ոչ թե ապրանքային նշան դաշտում, այլ արտադրողի անվանումը դաշտում: Գնահատող հանձնաժողովը հենց ինքը չի հասկացել, թե՞ որն է հրավերով նշված տեխնիկական բնութագիրը և արդյո՞ք տեխնիկական բնութագրում առկա է ապրանքի անվանման և ապրանքային նշանին վերաբերվող պահանջ, թե՞ ոչ և դուրս գալով իր լիազորությունների շրջանակից ենթադրել է, որ տեխնիկական բնութագրում առկա է ապրանքի անվանման և ապրանքային նշանին վերաբերվող պահանջ, որը իրականում առկա չէ և Մասնակցին առաջարկել է շտկել՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի խախտում: Իսկ ինչ վերաբերվում է

այն հանգամանքին, որ անհասկանալի TORCH GO LTD արտադրողի անվանումը կապել է նշանի հետ և ոչ ճիշտ տեղեկությամբ արձանագրել, թե իբր 10-րդ և 11-րդ չափաբաժիններում այն նշված է ապրանքային նշան դաշտում, ապա այն ակնհայտ անհիմն է և ոչ իրավաչափ:

Արդյունքում Մասնակցին ուղղված այն պահանջը, որ առկա է արձանագրված անհամապատասխանություն խեղաթյուրված է, հստակորեն հասկանալի չէ, թե՞ գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի իրական պահանջը որն է: Նշվածի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր բազմաթիվ որոշումներով՝ այդ թվում, 18.04.2006 թվականի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, արձանագրելով իրավական որոշակիության սկզբունքի կարևորությունը, որը կարևոր նախապայման է քաղաքացուն ուղղված պահանջի հստակ ձևակերպումը, որը կարևոր նախապայման է հանդիսանում քաղաքացու կողմից պատշաճ վարքագծի ձևավորման և իրեն ուղղված պահանջի պատշաճ կատարման համար, հակառակ պարագայում ոչ հստակ ձևակերպված պահանջը, անդրադառնալով Մասնակցի վարքագծին կբացառի նրա մեղքի առկայությունը: ՀՀ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ նորմը իր կիրառությունն է գտել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 02.03.2021 թվականի թիվ ՍՑ-ՆԳ-2021/43 որոշմամբ, որով բողոքներ քննող անձը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի շրջանակում՝ իրավական որոշակիության համատեքստում կարևորել է Պատվիրատուի/գնահատող հանձնաժողովի վարքագիծը և մասնակցին ուղղված պահանջի հստակ և օրինական ձևակերպումը: Նշվածը հատկանշական է միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով:

3. Պահանջը.

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/61 ընթացակարգի շրջանակներում 16.03.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.03.2021թ. թիվ 3/27/11929-21 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ ուղարկում է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-2021-ԿԵՆՑԱՂ/ՀԻԳ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գարծընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/61 ընթացակարգի շրջանակներում 16.03.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-2021-ԿԵՆՑԱՂ/ՀԻԳ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի 1-3-րդ, 5-6-րդ և 8-11-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում կան անճշտություններ՝ հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ անվանումը և ապրանքային նշանը չեն համապատասխանում տեխնիկական բնութագրով նշված պահանջներին.

-10-րդ չափաբաժնի «TORCH GO LTD» ապրանքային նշանը չի համապատասխանում հրավերի հավելված 1.1-ի պահանջներին,

-11-րդ չափաբաժնի «TORCH GO LTD» ապրանքային նշանը չի համապատասխանում հրավերի հավելված 1.1-ի պահանջներին:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը տրամադրել է մեկ աշխատանքային օր՝ մինչև 23.02.2021թ., շտկելու անհամապատասխանությունները:

4. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 22.02.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով 22.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ՝ միաժամանակ տրամադրելով մեկ աշխատանքային օր՝ մինչև 23.02.2021թ., շտկելու անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3202-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 01.03.2021թ. թիվ 3/27/11929-21 գրությունը և կից փաստաթղթերը, «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար

գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին***:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-2021-ԿԵՆՑԱՂ/ՀԻԳ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի 1-3-րդ, 5-6-րդ և 8-11-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում կան անճշտություններ՝ հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ անվանումը և ապրանքային նշանը չեն համապատասխանում տեխնիկական բնութագրով նշված պահանջներին.

-10-րդ չափաբաժնի «TORCH GO LTD» ապրանքային նշանը չի համապատասխանում հրավերի հավելված 1.1-ի պահանջներին,

-11-րդ չափաբաժնի «TORCH GO LTD» ապրանքային նշանը չի համապատասխանում հրավերի հավելված 1.1-ի պահանջներին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը տրամադրել է մեկ աշխատանքային օր՝ մինչև 23.02.2021թ., շտկելու անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 22.02.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով 22.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ՝ միաժամանակ տրամադրելով մեկ աշխատանքային օր՝ մինչև 23.02.2021թ., շտկելու անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

Այսպիսով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանվում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն

իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Ընկերության կողմից Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն, հանձնաժողովի արձանագրության և Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ մանրամասն և բավարար հստակությամբ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, ավելին՝ խեղաթյուրվել է ներկայացված տեղեկատվությունը, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ որպես անհամապատասխանություն նշվել է, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ի՝ ապրանքի ամբողջական նկարագրի 10-րդ և 11-րդ չափաբաժիններով ներկայացված «TORCH GO LTD» ապրանքային նշանը չի համապատասխանում հրավերի Հավելված 1.1-ի պահանջներին, մինչդեռ արձանագրում եմ, որ համաձայն Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի՝ 10-11-րդ

չափաբաժինների «TORCH GO LTD» ներկայացվել է որպես արտադրողի անվանում, որպիսի պայմաններում գտնում եմ, որ անհասկանալի է, թե կոնկրետ ի՞նչ անհամապատասխանություններ են առկա հայտի 1.1 Հավելվածում, և ի՞նչ շտկում պետք է իրականացվեր Ընկերության կողմից:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3202-2021 գրությամբ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**